ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/05

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի

Մասնակից՝ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ներկայացուցիչ՝ Գ. Կարապետյանի

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Կիրակոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.01.2021թ.-ի թիվ 26/26-1/231-2021 գրությամբ «Պրեստիժ Լենդ»

ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26098 գրության հիման վրա, 13.01.2021թ.-ին «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 13.01.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 13.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/05 համարի ծածկագիրը:

21.01.2021թ.-ին և 05.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 21.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.02.2021թ.-ին:

2. <u>Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանը 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26098 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի /վերանվանված «Արմ Լյուքս» ՍՊԸ/ միջև 19.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով

Պատվիրատուին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն), իսկ Պատվիրատուին պարտավորվում է ընդունել ծառայությունը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 10.02.2020թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

19.02.2020թ. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի թիվ 25/01-25/3170 գրությամբ տեղեկացվել է Կատարողին, մինչև 02.03.2020թ. ներկայանալ աշխատակազմ՝ միջոցառման անցկացման վայրը, ծրագիրը և ճաշացանկը համաձայնեցնելու համար:

03.03.2020թ. Կատարողի կողմից ստացել ենք գրություն՝ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում իրականացվող միջոցառման համար պարզաբանումներ ստանալու նպատակով:

Ի պատասխան գրության՝ էլեկտրոնային հասցեով ուղարկվել են մեր առաջարկությունները: Այս ամենից հետո Կատարողի կողմից ոչ մի առաջարկ չի եղել և միջոցառումը /Կանանց միջազգային օր/չի կայացել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ «Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ/ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ

պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, ամբողջովին հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.01.2021թ.-ի գրությամբ դիմել է «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2021թ.-ի թիվ 26/26-1/231-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 21.01.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/05 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ծառայությունների մատուցման համար նախնտրելի ժամկետ է համարվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 08.03.2020թ.-ից 09.03.2020թ.-ը, իսկ միջոցառումը կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է Պատվիրատուի հետ համաձայնեցում:

iii. Պայմանագրի 7.13-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

iv. Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի միջև 10.02.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Պատվիրատուն 19.02.2020թ.-ին թիվ 25/01-25/3170 գրությամբ դիմել է Մասնակցին և հայտնել է, որ կողմերի միջև 19.12.2019թ.-ին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի շրջանակներում 08.03.2020թ.-ին պետք է իրականացվի ծառայության մատուցում՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ, ինչով պայմանավորված, խնդրել են Մասնակցին մինչև ս.թ.

մարտի 2-ը ներկայանալ Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմ՝ միջոցառման վայրը, ծրագիրը և ճաշացանկը Պատվիրատուի հետ համաձայնեցնելու նպատակով:

vi. Ի պատասխան վերոնշյալ գրության, Մասնակիցը 03.03.2020թ.-ին դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում մարտի 8-ին կանանց տոնին նվիրված միջոցառումը պատշաճ անցկացնելու համար անհրաժեշտ են պարզաբանումներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը խնդրել է տրամադրել հնարավորինս սեղմ ժամկետում:

vii. Ի պատասխան Մասնակցի 03.03.2020թ.-ի գրության, Պատվիրատուն 05.03.2020թ.-ին թիվ 25/02-23584 գրությամբ ներկայացրել է «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից դիմումով պահանջվող տեղեկատվությունը:

viii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 30.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26099 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի /վերանվանված «Արմ Լյուքս» ՍՊԸ/ միջև 19.12.2019թ.-ին կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով գնման պայմանագրի, իսկ 10.02.2020թ.-ին կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, սակայն Մասնակցի կողմից Պայմանագրով նախատեսված ծառայությունը չի մատուցվել, այն է՝ միջոցառումը /Կանանց միջազգային օր/չի կայացել:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ «ա» մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, «բ» խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, ամբողջովին հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2021թ.-ի թիվ 26/26-1/231-2021 գրությամբ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի միջև 19.12.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով համաձայն ծառայությունների մատուցման համար նախնտրելի ժամկետ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 08.03.2020թ.-ից

09.03.2020թ.-ը, իսկ միջոցառումը կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է Պատվիրատուի հետ համաձայնեցում: Կողմերի միջև 10.02.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը: Պատվիրատուն 19.02.2020թ.-ին թիվ 25/01-25/3170 գրությամբ դիմել է Մասնակցին և հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում 08.03.2020թ.-ին պետք է իրականացվի ծառայության մատուցում՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ, ինչով պայմանավորված, խնդրել են Մասնակցին մինչև ս.թ. մարտի 2-ը ներկայանալ Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմ՝ միջոցառման վայրը, ծրագիրը և ճաշացանկը Պատվիրատուի հետ համաձայնեցնելու նպատակով, որին ի պատասխան, Մասնակիցը 03.03.2020թ.-ին դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում մարտի 8-ին կանանց տոնին նվիրված միջոցառումը պատշաճ անցկացնելու համար անհրաժեշտ են պարզաբանումներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը խնդրել է տրամադրել հնարավորինս սեղմ ժամկետում: Պատվիրատուն 05.03.2020թ.-ին թիվ 25/02-23584 գրությամբ ներկայացրել է «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից դիմումով պահանջվող տեղեկատվությունը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 30.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26099 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի /վերանվանված «Արմ Լյուքս» ՍՊԸ/ միջև 19.12.2019թ.-ին կնքվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/16-3» ծածկագրով գնման պայմանագրի, իսկ 10.02.2020թ.-ին կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, սակայն Մասնակցի կողմից Պայմանագրով նախատեսված ծառայությունը չի մատուցվել, այն է՝ միջոցառումը /Կանանց միջազգային օր/չի կայացել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի, միակողմանի, ամբողջովին հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 29.12.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 30.12.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2021թ. թիվ 26/26-1/231-2021 գրությամբ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/05 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ